# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

05 մարտի 2019թվական — թիվ 12

### ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ԱՐԹՈՒՐԻԿ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով և ՀՀ կառավարության 1998թվականի դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշման պահանջներով*, նկատի ունենալով այն հանգամանքը , որ Արթուրիկ Մկրտչյանի ընտանիքին հատկացված հողամասից՝ քարտեզագրման արդյունքում հաշվառված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, այն չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային օգտագործմանը, չի ընդգրկված ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման, ինչպես նաև հնագիտական պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, չի հանդիսանում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի *հողամաս ընդգրկված չէ նախատեսված սահմանափակումների ցանկում, և սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները.*

Որոշում եմ՝

1. Ճանաչել՝ Արթուրիկ Հայկազի Մկրտչյանի ընտանիքի սեփականության իրավունքը իրենց հատկացված 0151-0008 ծածկագրի՝ 1.12 հա հողամասից մինչև 20 տոկոս ավել օգտագործվող 0.224 հա հողամասի նկատմամբ :
2. *Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ֆ.Ֆիդանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

05 մարտի 2019Թվական　　　　　　　　　　թիվ 13

### ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿԻՉ ՖԱԹԻՄԱ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով և ՀՀ կառավարության 1998թվականի դեկտեմբերի 31-ի թիվ 867 որոշման պահանջներով* , նկատի ունենալով այն հանգամանքը , որ Ֆաթիմա Մկրտչյանին հատկացված հողամասից՝ քարտեզագրման արդյունքում հաշվառված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային կամ գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, այն չի խոչընդոտում այլ հողամասերի նպատակային օգտագործմանը, չի ընդգրկված ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման, ինչպես նաև հնագիտական պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, չի հանդիսանում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի *հողամաս ընդգրկված չէ նախատեսված սահմանափակումների ցանկում, և սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները.*

Որոշում եմ՝

1. Ճանաչել՝ Ֆաթիմա Հայկազի Մկրտչյանին սեփականության իրավունքով հատկացված 0018-0008 ծածկագրի՝ 0.12 հա տնամերձ հողամասից մինչև 20 տոկոս ավել օգտագործվող 0.024 հա հողամասի նկատմամբ :
2. *Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:*

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ　　　　Ֆ.Ֆիդանյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

7 Մարտի 2019թվական — թիվ 14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԸ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2009թվականի սեպտեմբերի 17-ի N1066-Ն որոշման 7-րդ և 9-րդ կետի պահանջներով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսական նշանակության հողերի հողատեսքերի փոփոխման հանձնաժողովի՝ բազմամյա տկարքների հիմնման ակտերը.

Որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքի քաղաքացիների սեփականություն հանդիսացող 12.1197 հա վարելահողերը փոխադրել ավելի բարձրարժեք բազմամյա տնկարք ՝ խաղողի այգի հողատեսքի ՝համաձայն հավելված 1-ի:

2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքի քաղաքացիների սեփականություն հանդիսացող 2.89հա վարելահողերը փոխադրել ավելի բարձրարժեք բազմամյա տնկարք՝կորիզավոր պտղատու այգի հողատեսքի՝ համաձայն հավելված 2-ի:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Ֆ.ՖԻԴԱՆՅԱՆ

Հավելված 1
Արմավիր մարզի Ակնալճի համայնքապետի
2019թվականի մարտի 7-ի թիվ14 որոշման

Ցուցակ
Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքի այն քաղաքացիների, ովքեր իրենց սեփական վարելահողերի վրա հիմնել են խաղողի այգիներ

| Հ/Հ | Ազգանուն, Անուն, հայրանուն | հողամասի ծածկագիրը | վարելահողից՝ խաղողի այգու փոխադրվող հողամասի չափը/հա/ |
|---|---|---|---|
| 1 | Մկրտչյան Մկրտիչ Վելիխանի | 183-002 | 0.53 |
| | | 171-002 | 0.72 |
| | | 172-012 | 2.7067 |
| 2 | Խլղաթյան Սամվել | 173-009 | 0.53 |
| 3 | Սանուկյան Ալվարդ | 181-017 | 0.88 |
| | | 181-016 | 0.35 |
| 4 | Անտանոսյան Արարատ | 0153-0002 | 0.24 |
| 5 | Դավթյան Անդրանիկ | 224-0020 | 0.15 |
| | | 222-0020 | 0.11 |
| | | 223-0020 | 0.15 |
| | | 227-0019 | 0.15 |
| 6 | Աբրահամյան Վաչագան | 224-021 | 0.13 |
| | | 222-021 | 0.11 |
| | | 223-021 | 0.14 |
| | | 227-020 | 0.13 |
| 7 | Խլղաթյան Գագիկ Իշխանի | 141-005 | 0.994 |
| 8 | Կիրակոսյան Վազգեն | 141-003 | 0.73 |
| 9 | Ավետիսյան Անդրանիկ | 223-0023 | 0.14 |
| | | 224-0023 | 0.15 |
| | | 222-0023 | 0.2 |
| | | 227-0022 | 0.14 |
| 10 | Հարությունյան Վարդան Սոսի | 218-0022 | 0.7 |
| 11 | Ավետիսյան Անդրանիկ Մուշեղի | 204-004 | 1.0 |
| 12 | Սուքիասյան Հրաչիկ | 154-002 | 1.039 |
| | Ընդամենը | | 12.1197 |

Հավելված 2
Արմավիր մարզի Ակնալճի համայնքապետի
2019թվականի մարտի 7-ի թիվ 14 որոշման

Ցուցակ
Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքի այն քաղաքացիների, ովքեր իրենց սեփական վարելահողերի վրա հիմնել են կորիզավոր պտղի այգիներ

| Հ/Հ | Ազգանուն,Անուն,հայրանուն | հողամասի ծածկագիրը | վարելահողից՝ կորիզավոր պտղատու այգու փոխադրվող հողամասի չափը/հա |
|---|---|---|---|
| 1 | Սուքիասյան Վաչիկ Խաչիկի | 154-003 | 1.0 |
| 2 | Գասպարյան Թևան Զավենի | 154-004 | 0.63 |
| 3 | Գասպարյան Զավեն Բախշիի | 208-0012 | 1.06 |
| 4 | Գորգիևյան Սեդրակ Արտաշի | 158-002 | 0.11 |
| | Գորգիևյան Սեդրակ Արտաշի | 158-003 | 0.09 |
| | | | |
| | Ընդամենը | | 2.89հա |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |
| | | | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

26 / մարտի / 2019 թվական

թիվ 15

# ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ և 64-րդ հոդվածի երկրորդ մասով, ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թվականի մայիսի 18-ի ,, Ինքնակամ կառույցի օրիականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին,, թիվ 912-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով ինքնակամ կառույցն իրականացրած անձանց՝ Վարդգես Վահանի Սարուխանյանի , Սոնա Աղվանի Սարուխանյանի , ՀովիկՎարդգեսի Սարուխանյանի , ԱննաՎարդգեսի Սարուխանյանի և Վահան Վարդգեսի Սարուխանյանի դիմումները.*

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով /սեփ.իրավունքի N 876853վկայական/ Ակնալիճ համայնքի Ազատամարտիկների փողոցի թիվ 19 հասցեում գտնվող՝ Վարդգես Վահանի Սարուխանյանին/ծնված՝18.11.1961թ./, Սոնա Աղվանի Սարուխանյանին /ծնված՝ 15.10.1961թ./, Հովիկ Վարդգեսի Սարուխանյանին /ծնված՝01.09.1984թ./, Աննա Վարդգեսի Սարուխանյանին /ծնված՝05.05.1986թ./ և Վահան Վարդգեսի Սարուխանյանին /ծնված՝ 06.05.1989թ./ պատկանող տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված՝ 53.21քմ արտաքին մակերեսով բնակելի տունը, 43.64քմ մակերեսով ծածկը, 2.8քմ Զուգարանը, 3.91քմ թռչնանոցը, 6.64քմ պարիսպը, ինքնակամ բացված 1 պատուհանը և 2 դուռը ճանաչել օրինական, սահմանված վճարների գանձմամբ ՝ 912-Ն որոշմամբ հաշվարկված՝ ընդամենը արտաքին 110.2քմ մակերեսով ինքնակամ շինությունների օրինականացման համար ՝ բնակելի տների յուրաքանչյուր մեկ քառ. մետրի համար՝ բազային տուրքի 10-ապատիկի չափով՝ 860դրամ, բնակելի տներին կից տնտեսական և օժանդակ կառույցների յուրաքանչյուր մեկ քառ. մետրի համար՝ 6-ապատիկի չափով՝ 516դրամ, ընդամենը՝ 76700 Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճար:

2. Ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, շինությունը կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման ու անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում, օրինականացման համար սահմանված վճարումը Ակնալիճ համայնքի բյուջե չկատարելու դեպքում նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ գրանցման , իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ֆ.ՖԻԴԱՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

26 մարտի 2019թվական — թիվ 16

## ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով „Տեղական ինքնակառավարման մասին„Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 22-րդ կետով , Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի Դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով Վարդգես Վահանի Սարուխանյանի , Սոնա Աղվանի Սարուխանյանի , ՀովիկՎարդգեսի Սարուխանյանի , ԱննաՎարդգեսի Սարուխանյանի և Վահան Վարդգեսի Սարուխանյանի դիմումները

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքում գտնվող՝ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով /սեփ.իրավունքի N876853 վկայական/ Վարդգես Վահանի Սարուխանյանին, Սոնա Աղվանի Սարուխանյանին , ՀովիկՎարդգեսի Սարուխանյանին , ԱննաՎարդգեսի Սարուխանյանին և Վահան Վարդգեսի Սարուխանյանին պատկանող 032-012 ծածկագրի բնակելի տանից առանձնացված 0032- ծածկագրի՝ 0.0941հա տալ Ազատամարտիկների փողոցի թիվ 19 հասցե, իսկ 0032- ծածկագրի 0.0464 հա Ազատամարտիկների փողոցի թիվ 19/1 հասցե :

2.Սույն որոշումը պետական գրանցման համար ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի միավորված մարզերի ստորաբաժանում:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Ֆ.ՓԻԴԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

*26 մարտի 2019թվական* *N_17_*

*ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 5-ի « Ակնալիճ համայնքի 2019 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին» N-35-Ն որոշումը, Սիլվա Փանոսյան դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սիլվա Փանոսյանին տալ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:
2. Սահմանված կարգով իրականացնել նախատեսված տեղական տուրքի վճարում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ֆ.ՖԻԴԱՆՅԱՆ

*2019 թվականի մարտի 26*
*գ. Ակնալիճ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ

ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

---

*26 մարտի 2019թվական* *N_18_*

## ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 5-ի « Ակնալիճ համայնքի 2019 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը հաստատելու մասին» N-35-Ն որոշումը, Սարգիս Քիշմիշյան դիմումը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Սարգիս Քիշմիշյանին տալ ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:
2. Սահմանված կարգով իրականացնել նախատեսված տեղական տուրքի վճարում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ֆ.ՖԻԴԱՆՅԱՆ

*2019 թվականի մարտի 26*

*գ. Ակնալիճ*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ

## ՈՐՈՇՈՒՄ

26 Մարտի 2019թվական N -19-

*ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎՃԱՐՈՎԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ*

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 777-781-րդ հոդվածներով, համայնքի մշակույթի տան շրջակա միջավայրի պաշտպանության աշխատանքները իրականացնելու նպատակով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքի բնակիչ՝ Մուրադ Մանուկյանի հետ կնքել ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր ութ ամիս ժամկետով՝ համաձայն հավելվածի:
2. Ծառայությունների վճարումն իրականացնել ամսական վճարման տեսքով՝ 33000հազար Հայաստանի Հանրապետության դրամ՝ ներառյալ հարկեր:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Ֆ.ՖԻԴԱՆՅԱՆ

*2018 թվականի մարտի <<26>>*

*գ. Ակնալիճ*

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ**
**ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ**

---

**26 / մարտի / 2019 թվական** **թիվ 20**

# ԲԱՐՁՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ՑԱԾՐԱՐԺԵՔ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈԽԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ,, հողային օրենսգրքի,, 43-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ ենթակետով ,,, Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով , Հայաստանի Հանրապետության կառավարության 2009թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1066-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Արմավիրի մարզպետի 2019թվականի մարտի 19-ի թիվ 01/14/01507-2019 գրությունը

Որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքի վարչական տարածքում գտնվող բարձրարժեք հողատեսքերը / խաղողի և պտղատու այգիներ/ փոխադրել ավելի ցածրարժեք հողատեսքերի՝ վարելահողերի ՝ համաձայն հավելվածների :

2.Սույն որոշումից ծագող իրավունքների պետական գրանցման նպատակով որոշման մեկ օրինակը ներկայացնել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտե :

3.Պետական գրանցումն ստանալուց հետո կատարել փոփոխություն համայնքի կողմից վարվող գույքային հարկերի հաշվառման համակարգում:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավարի ժ/պ՝ **Ֆ.Ֆիդանյան**

Հավելված 1
Արմավիր մարզի Ակնալճի համայնքապետի
2019թվականի մարտի 26 -ի թիվ 20 որոշման

Ցուցակ
Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքի քաղաքացիների քանդված խաղողի այգիների վերաբերյալ

| Հ/Հ | Սեփականատիրոջ անուն, ազգանուն | Հողամասի ծածկագի | Հողամասի չափ | Ինչ հողատեսք է | Ինչ է դարձել |
|---|---|---|---|---|---|
| 1 | Գորգիկյան Մխիթար | 04-004-0162-0009 | 0.28 | խաղող | վարելահող |
| 2 | Բաղդասարյան Հովիկ | 04-004-0205-0010 | 0.31 | խաղող | վարելահող |
| | | 04-004-0205-0003 | 0.37 | խաղող | վարելահող |
| | | 04-004-0205-0005 | 0.34 | խաղող | վարելահող |
| 3 | Բաղդասարյան Ահարոն | 04-004-0205-0002 | 0.38 | խաղող | վարելահող |
| | | 04-004-0205-0006 | 0.34 | խաղող | վարելահող |
| | | 04-004-0205-0009 | 0.36 | խաղող | վարելահող |
| 4 | Գասպարյան Աշոտ Ավետիքի | 04-004-0159-0009 | 0.28 | խաղող | վարելահող |
| 5 | Գասպարյան Ավետիք | 04-004-0142-0003 | 0.33 | խաղող | վարելահող |
| 6 | Ենոքյան Դուսյա | 04-004-0122-002 | 0.493 | խաղող | վարելահող |
| 7 | Մանուկյան Գրիշ | 04-004-0168-0002 | 0.492 | խաղող | վարելահող |
| 8 | Սլոյան Ռուստամ | 04-004-0142-0009 | 0.18 | խաղող | վարելահող |
| 9 | Ֆիդանյան Ֆուրման | 04-004-0153-0005 | 0.396 | խաղող | վարելահող |
| 10 | Գորգիկյան Արտաշ | 04-004-0160-0001 | 0.24 | խաղող | վարելահող |
| 11 | Գևորգյան Հրաչիկ Մելսիկի | 04-004-0207-0017 | 0.5 | խաղող | վարելահող |
| 12 | Գորգիկյան Սեդրակ | 04-004-0160-0002 | 0.3 | խաղող | վարելահող |
| | | 04-004-0158-0003 | 0.11 | խաղող | վարելահող |
| 13 | Ավետիսյան Համլետ Աղասու | 04-004-0205-0007 | 0.331 | խաղող | վարելահող |
| | | 04-004-0205-0008 | 0.614 | խաղող | վարելահող |
| | | 04-004-0205-0001 | 0.113 | խաղող | վարելահող |
| 14 | Բալոյան Սամվել | 04-004-0221-0019 | 0.28 | խաղող | վարելահող |
| | | 04-004-0220-0019 | 0.27 | խաղող | վարելահող |
| | | 04-004-0225-0019 | 0.32 | խաղող | վարելահող |
| | | 04-004-0226-0019 | 0.16 | խաղող | վարելահող |
| 15 | Բաղդասարյան Սաշա | 04-004-0127-0002 | 0.61 | խաղող | վարելահող |
| 16 | Նալբանդյան Զինա | 04-004-0128-0015 | 0.432 | խաղող | վարելահող |

Աշխատակազմի քարտուղար ______________________

Հավելված2
Արմավիր մարզի Ակնալճի համայնքապետի
2019թվականի 26 -ի թիվ20 որոշման

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ Արմավիրի մարզի Ակնալիճ համայնքում քանդված պտղատու այգիների վերաբերյալ

| Հ/Հ | Սեփականատիրոջ անուն, ազգանուն | Հողամասի ծածկագի | Հողամասի չափ | Ինչ հողատեսք է | Ինչ է դարձել |
|---|---|---|---|---|---|
| 1 | Ղազարյան Գյոզալ | 04-004-0119-0008 | 0.85 | պտուղ | վարելահող |
| | | 04-004-0119-0005 | 0.72 | պտուղ | վարելահող |
| 2 | Կիրակոսյան Անուշավան | 04-004-0119-0006 | 1.0 | պտուղ | վարելահող |
| 3 | Բեռնատոսյան Մանուշակ | 04-004-0124-0001 | 0.52 | պտուղ | վարելահող |
| 4 | Բեռնատոսյան Ցոլակ | 04-004-0119-002 | 0.82 | պտուղ | վարելահող |
| 5 | Սահակյան Հայկ | 04-004-0117-005 | 1.308 | պտուղ | վարելահող |
| 6 | Սուքիասյան Խաչիկ | 04-004-0154-0006 | 0.31 | պտուղ | վարելահող |
| 7 | Գասպարյան Թեան | 04-004-0140-0002 | 1.0 | պտուղ | վարելահող |

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ
## ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

<<29>> մարտի 2019թվական N 21

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱԿՆԱԼԻՃ ՀԱՄԱՅՆՔԻ ,,ՀՐԱՇԱՄԱՆՈՒԿ,, ՀՈԱԿ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐՍԿՍԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,, Տեղական ինքնակառավարման մասին ,, Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասով.

Որոշում եմ՝

1. 2019թվականի ապրիլի 1-ից վերսկսել Ակնալիճ համայնքի ,,Հրաշամանուկ,, ՀՈԱԿ մանկապարտեզի աշխատանքները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավարի ժ/պ՝ Ֆ.Ֆիդանյան

*2019 թվականի մարտի 29*

*գ. Ակնալիճ*